ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1917 Թ.

Վ. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակը բեկումնային փուլ հանդիսացավ Ռուսական պետության, ինչպես նաև Հայաստանում ազգային-դեմոկրատական շարժման ծավալման, համար։ Հաղթական պատերազմ մղող Ռուսաստանի կողմից Հայաստանի արևմտյան մարզերը գրավելու և այնտեղ կայուն քաղաքացիական կարգ ստեղծելու գաղափարը նպաստավոր իրադրության պայմաններում մեկ անգամ ևս ստացավ իրական և լուծելի կերպարանք։ Ազգային-ազատագրական շարժման բազմաթիվ հիմնահարցերին զուգահեռ հորից կյանքի կոչվեց Հայկական հարցը։

Շարունակվող համաշխարհային պատերազմի պայմաններում, համեմատաբար խաղաղ 1916 թ. և 1917 թ. սկզբին Հայկական հարցը թևակոխեց զարգացման նոր շրջան, իր մեջ ամփոփելով բազմապիսի խնդիրներ՝ ստեղծելով դրանց կուռ ամբողջություն։ Այս հանգամանքը էապես առանձնացնում է 1917 թ. Հայկական հարց հասկացությունը՝ վերջինիս ընդհանուր շարժման և պատմության մեջ։ Ամենից առաջ դա այն էր, որ այլևս գոյություն չուներ ռուսական ցարիզմը, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանը կցել Ռուսաստանին՝ մերժելով արևմտահայերի ինքնավարության գաղափարը։

Ժամանակավոր կառավարության առաջին գործը եղավ 1917 թ. մարտի 4-ի «Խղճի և ազգային սահմանափակումների վերացման մասին» որոշումը[1], որը հեղափոխության առաջին նվաճումներից էր։ Վավերացնելով ճնշված ազգերի ազատագրումը, ժամանակավոր կառավարությունը դրանով հույս ներշնչեց Ռուսաստանի ազգային-դեմոկրատական ուժերին, որ այլևս չի վերադառնա մռայլ անցյալը և դեմոկրատական հասարակարգը լայն հնարավորություններ կբացի ազգային գոյության և զարգացման համար։ Ուստի և միապետության տապալման լուրը, հատկապես հեղափոխության խոստումների ալիքի վրա, խանդավառություն էր ծնում հայ իրականության մեջ։

Առաջինը արձագանքեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն մարտի 14-ի իր ողջույնի հեռագրում՝ ուղղված Ռոձյանկոյին և Լվովին, որտեղ ժամանակավոր կառավարությունը դիտվում էր որպես փոքր ժողովուրդների, այդ թվում և հայերի միակ պաշտպան և, որ առավել կարևոր էր, պատերազմը մինչև հաղթական վախճանը իրականացնող[2]։ Մարտի 23-ին, իր երկրորդ հեռագրում, նա գրում էր. «Օս մեծահույս եմ, որ վերանորոգված Ռուսաստանը, քաջարի դաշնակիցների համաձայնությամբ, կստեղծեն նախկին տաճկական վիլայեթների վրա ազատ Հայաստան»[3]։

Այս առումով լիովին համապատասխանում էին հայերի իղձերի արտահայտիչ Գևորգ Ե-ի տեսակետները և ժամանակավոր կառավարության արդարադատության նախարար Ա. Կերենսկու մայիսի 12-ին արած հայտարարությունը։ Կերենսկին ռուս զինվորներին կոչ էր անում. «Ոչ թե նվաճում-

---

1 Տե՛ս ЦГАОР РФ, ф. 1779, оп. 2, д. 128, л. I, նաև՝ Вестник Временного правительства. Петроград, 30 марта, 1917.

2 Տե՛ս ԱԱ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 151, թ. 4։

3 Նույն տեղում, թ. 14։

ների ու բռնության, այլ ազատ Ռուսաստանի փրկության համար դուք կգնաք առաջ, այնտեղ, ուր ձեզ կուղեկցեն առաջնորդներն ու կառավարությունը»[4]։

Բոլորովին հակում չունենալով դավերդել Կերենսկուն, որը 1917 թ. հայերի մոտ հայ ժողովրդի «փրկչի» անուն էր վաստակել, ուզում ենք հիշատակել միայն մեղ հետաքրքրող պատերազմի հարցում Միլյուկովի և Կերենսկու ունեցած տեսակետները, որ տվել է ժամանակավոր կառավարության գործերի կառավարիչ, հետագայում Պետրոգրադում Կովկասի կոմիսար Վ. Նաբոկովն իր գրքում։ Միլյուկովն այն կարծիքին էր, որ Ռուսաստանում պատերազմի շնորհիվ է, որ դեռևս ամեն ինչ, այդ թվում և հեղափոխությունը, ինչ-որ ձևով կանգուն է և առանց որի՝ կքանգվի։ Մինչդեռ «դեմոկրատիայի պատանդ, սոցիալիստ-տրուդովիկ Կերենսկու դիրքորոշումը և կարգախոսները երկիմաստ էին[5]։ Ուստի Նաբոկովը, ինչպես և ռուսական բուրժուազիան, մտավորականությունը չէին թաքցնում և հատուկ նշում էին, որ Փետրվարյան հեղափոխությունը դիտում են որպես պատերազմը շարունակելու, այն իր հաղթական վախճանին հասցնելու գլխավոր միջոց և դա ի հակակշիռ ցարական «անկարող» իշխանության։ Անդամ Մ. Դորկին գրում էր, որ կառավարությունը իր ազատագրական գործը պետք է պսակի հաշտություն կնքելով, որը, սակայն, չպետք է լինի հաշտություն ինչ գնով էլ լինի։ Դա պետք է լինի այնպիսին, որ Ռուսաստանին հնարավորություն տա պատվով գոյություն ունենալ երկրագնդի մյուս ժողովուրդների առաջ[6]։

Հայկական հարցի հետփետրվարյան բնույթի տարբերիչ կողմերից մեկն այն էր, որ հարցը բարձրացվում էր շարունակվող հաղթական պատերազմի պայմաններում, առավել քան երբեք դարձել էր պատերազմական հարց, անեքսիայի՝ հայ ժողովրդի համար շահավետ և առաջադիմական իմաստով։ Այժմ Հայկական հարցը չուներ իր նախորդ փուլերին հատուկ միջազգային, դիվանագիտական ուղղվածությունը, չէր հանձնվելու վեհաժողովների ապավինությանը։ 1917 թ. Հայկական հարցը դարձել էր ավելի շատ բուն հայոց հարց, որը պայմանավորվում էր հայ իրականության ներքին կյանքի հակասական խնդիրներով։ Դրանք էին նախ և առաջ Հայկական հարցի բարձրացման նպատակահարմարության, ավտոնոմիայի կամ անեքսիայի ընտրության, ռազմաճակատի պահպանման, հաղթական պատերազմի շարունակման, վերջինիս երաշխիքը հանդիսացող ազգային զորամասերի ձևավորման, արևմտահայության և արևելահայության շահերի ու համատեղ գործունեության, Արևմտյան Հայաստանում քաղաքացիական իշխանության ստեղծման, ինքնապաշտպանության, Ազգային բյուրոյի վերակազմավորման, Անդրկովկասի ազգային հարցի, Հայկական հարցի լուծման համար հայկական և օտար միջազգային կազմակերպությունները ներգրավելու, գաղթականության և այլ խնդիրները։ Այս բոլորի ամբողջությունն էլ, մեր կարծիքով, կազմում է 1917 թ. փետրվարից հետո Հայկական հարցի էությունը։ Դրանցից կարևորագույնները հնարավորության չափով այստեղ կփորձենք լուսաբանել։

Նախ անդրադառնանք այն միջոցառումներին, որոնց նախաձեռնությունն ու լուծումը անմիջականորեն կապվում էր ժամանակավոր կառավարության գործունեության հետ։ Այդ թվում առաջնակարգը **Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության** ստեղծումն էր, որտեղ քաղաքացիական իշխանության հիմնումը նախ և առաջ պետք է լուծեր արևմտահայության ֆիզիկական գոյության և ապահովության հարցը։ Պատերազմի, կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանի բնակչության մնացորդները ողբերգական

---

[4] А. Ф. Керенский. Жизнь, политическая деятельность и речи. Петроград, 1917, с. 11.

[5] В. Набоков. Временное правительство (воспоминания), М., 1924, с. 58.

[6] Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 31, էջ 60։

վիճակ էին ապրում, մոլեգնում էր սովը, ավազակությունները, անապահով վիճակը։ Որպես վերջնական իշխանություն շարունակում էր գոյատևել ցարական նախկին գեներալ-նահանգապետությունը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո դրությունը չէր փոխվում։ «Ցարական ռեժիմը անփոփոխ է մնում Թուրքահայաստանի մեջ,— 1917 թ. մարտին իր վրդովմունքն էր հայտնում ՀՀԴ օրգան «Աշխատանք» թերթը,— նույն պաշտոնյաները, նույն ոստիկանական կազմը, նույն ստրկացնող վարչակազմը... Ռուսական հեղափոխության ալիքները դեռ չեն թափանցել Թուրքահայաստան»[7]։

Ազգային-դեմոկրատական մամուլը հաճախ էր հրապարակում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի անմիջական պահանջները, որոնք գլխավորապես հանդում էին Արևմտյան Հայաստանում հանրապետական-դեմոկրատական կարգերի ստեղծմանը, դեմոկրատական ընտրություններին, թիկունքում և լեռներում քրդական ավազակախմբերի զինաթափմանը, հին պաշտոնյաների հեռացմանը, հայկական միլիցիայի ստեղծմանը, գաղթականության հայրենիք վերադառնալու խոչընդոտների վերացմանը, վերաշինության գործին պետական աջակցությանը և այլն։

1917 թ. մարտի 26-ին Ազգային բյուրոյի նիստը գրեթե ամբողջովին նվիրվեց Արևմտյան Հայաստանի կառավարման խնդրին։ Սուր վիճաբանություններ են ծագում Արևմտյան Հայաստանի ապագա կառավարման համակարգի ձևերի, միջոցների շուրջը, դրսևորվում է Ազգային բյուրոյի մասնակիցների կարծիքների բազմազանությունը։

Արևմտյան Հայաստանի համար կենտրոնական մարմնի ստեղծման առաջարկով առաջինը հանդես է գալիս նորաստեղծ Հայ ժողովրդական կուսակցության ղեկավար Ս. Հարությունյանը, որը Հ. Առաքելյանի հետ միասին պնդում էր, որպեսզի կոմիսարը լինի ազգությամբ ռուս, Պետական դումայի անդամ և անպայման անկախ մարդ[8]։ Ռոստոմը առավելությունը տալիս էր զինվորական իշխանությանը, դա բացատրելով ռուսական զենքի միջոցով Հայաստան ստեղծելու հանգամանքով, ինչպես և նրանով, որ զինվորական խորհուրդների և Օզակոմի հասարակական գործադիր կոմիտեների գործունեությունը նվաճված շրջաններում կամա թե ակամա ինչ-որ իշխանություն էր ներկայացնում։ Ուշագրավ է, որ քաղաքացիական վարչություն ստեղծելու դեմ հանդես էր գալիս Խ. Կարճիկյանը, որն առաջարկում էր կամ թողնել նույն վիճակը, հին պաշտոնյաներին, կամ էլ իշխանությունը հանձնել ուժեղ հայ անձնավորությունների[9]։

Վիճաբանությունների հաջորդ փուլը վերաբերում էր նորաստեղծ քաղաքացիական իշխանության ենթակայության և ղեկավարման հարցին։ Նախ, Ալ. Խատիսյանը հայտնում է Հ. Զավրիյանի տեսակետը, որը Պետրոգրադ մեկնելուց առաջ խորհուրդ էր տվել կովկասցի գեներալ նշանակել։ Ալ. Սահակյանը բարձրացնում է անպայման զինվորականի, տվյալ դեպքում՝ Թ. Նազարբեկյանի նշանակման հարցը, որը զարգացնում է Անդրանիկը։ Նա գտնում էր, որ հայկական միլիցիայի կազմակերպումը ավելի գործնական քայլ է և որ այն պետք է ղեկավարի ռուս զինվորական՝ «որովհետև գերմանական գրոհին մենք չենք դիմանա»,— նշում էր Անդրանիկը[10]։

Այնուհետև հարց բարձրացավ Արևմտյան Հայաստանի կառավարման խնդիրը ազգամիջյան հարցերով զբաղվող նորաստեղծ «18-ի մասնաժողովի» քննարկմանը հանձնելու վերաբերյալ։ Դա կնշանակեր վրացիների և ադրբեջանցիների միջամտությունը, որի դեմ արտահայտվում են Ռոստոմը, Հովհաննես Թումանյանը։ Թումանյանը ելնում էր այն բանից, որ հաղ-

---

7 «Աշխատանք», Երևան, 18 մարտի 1917։

8 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 107։

9 Տե՛ս նույն տեղում, թ. 108։

10 Տե՛ս նույն տեղում։

թող ռուսական կովկասյան բանակի թիկունքում չի կարելի թույլ տալ թուրքերի գործունեություն, կարճ ասած, չի կարելի դավաճանել ռուսներին[11]։ Հետաքրքիր մոտեցում էր արտահայտում և Մ. Բերբերյանը. «Եթե ընդունենք այստեղի (Անդրկովկասի—Վ. Մ.) թաթարների կապը տաճիկների հետ, ապա արձանագրած կլինենք պանիսլամականությունը և թույլ կտանք, որպեսզի թուրքերն ապագայում կուզենան Կովկասից տերիտորիաներ միացնեն տաճկական հողերին»[12]։ Նիստի վերջում ամփոփումով հանդես է գալիս Ալ. Խատիսյանը, ներկայացնում է որոշումը, ըստ որի՝ 1. Արևմտյան Հայաստանի նոր վարչակարգի ստեղծման գործը նպատակահարմար է կապել Պետրոգրադի և ոչ թե Օղակոմի հետ, 2. գեներալ-նահանգապետ Ռոմանովսկի-Ռոմանկոյի փոխարեն նշանակել հայերի վերաբերյալ հրահանգներ ըստացող մի հատուկ մարդ, 3. աշխատել, որպեսզի գործի մեջ չմտնեն վրացիներն ու թուրքերը (ադրբեջանցիները—Վ. Մ.) և 4. Կերենսկու մոտ գործուղել Հ. Զավրիյանին (Զավրիև—Վ. Մ.)[13]։

Այս բոլորից կարող ենք եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության ստեղծումը նախապատրաստվում էր բուն հայկական միջավայրում և ոչ թե ժամանակավոր կառավարության ցանկությունն ու նպատակն էր արտացոլում, ինչպես մինչև այժմ ընդունված է եղել գիտական գրականության մեջ։

Հայ գործիչներից դաշնակցական Հ. Զավրիյանը, որն անձնական համեմատաբար լայն շփում ուներ ժամանակավոր կառավարության նշանավոր դեմքերի հետ, ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի ապագա վարչության ստեղծման ուղիները մշակելու գործին, Պետրոգրադում առաջարկեց ժամանակավոր հայկական կառավարություն ստեղծելու մասին։ Իսկ ինչ վերաբերում էր ռուս գեներալի նշանակմանը, ապա ինքը դա համարում էր դիվանագիտական դիցում, «տեխնիկական երևույթ»[14]։

Մայիսի 11-ին Երևանում հրավիրված դաշնակցության արևմտահայ շրջանային ժողովը իր կենտրոնական հարցը դարձրեց Արևմտյան Հայաստանում դարձնել ինքնավարության մասին Ռուսաստանի ընկերությունը։ Հանդես եկան նաև Մուշից, Վանից, Խնուսից ժամանած պատգամավորները։ Ժողովը որոշեց տեղական ազգաբնակչությունից և զինվորական խորհուրդներից կազմված խառը գործադիր մարմիններին աջակցել այնքանով, որքանով պատերազմի ընթացքում անհրաժեշտ է զինվորականության հետ դաշինքը[15]։

1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Թուրքահայաստանի կառավարման մասին ժամանակավոր կառավարության ապրիլի 25-ի որոշումը, որը ստորագրել էին ժամանակավոր կառավարության մինիստր-նախագահ Լվովը, արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովը և ժամանակավոր կառավարության գործերի կառավարիչ Վ. Նաբոկովը։ Ըստ այդ որոշման՝ 1. Թուրքահայաստանի և պատերազմի իրավունքով գրավված այլ մարզերի տերիտորիայի քաղաքացիական կառավարումը վերցվում էր կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն դրվում էր ժամանակավոր կառավարության տնօրինության տակ, 2. երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում էր գեներալ-կոմիսարին, 3. գյուղական և քաղաքային բնակչությունը օգտվելու էր ներքին ինքնավարության իրավունքներից և այլն։

---

11 Տե՛ս նույն տեղում, թ. 107։

12 Տե՛ս նույն տեղում։

13 Տե՛ս նույն տեղում, թ. 109։

14 Տե՛ս նույն տեղում, թ. 103։

15 Տե՛ս «Հորիզոն», 16 հունիսի 1917։

Ապրիլի 25-ի որոշումը օրենսդրական տեսք հաղորդեց Արևմտյան Հայաստանի կառավարմանը։ Արևմտյան Հայաստանը ճանաչվեց որպես առանձին վարչական միավոր։ Մայիսի 15-ին գեներալ-կոմիսար է նշանակվում Պ. Ավերյանովը, որը մայիսի 25-ից անցնելով իր պարտականությունների կատարմանը, սկսում է հնարավորին չափով վերաստեղծել և քաղաքացիական բնույթ տալ Ռուսաստանի նոր ձեռքբերմանը՝ հայկական մարզերին։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանը, առաջին անգամ իր պատմության մեջ ուղղակիորեն ենթարկվեց ռուսական պետությանը։ Համաշխարհային պատերազմում հաղթող Ռուսաստանի կողմից հայկական հողերի կցումը, անեքսիան, տվյալ պատմական իրողության մեջ անվիճելիորեն դրական քայլ էր, այլ բան էր, թե ինչու՞ էր Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. մայիսի վերջին և ոչ թե անմիջապես իշխանությունը գրավելուց հետո իրեն ենթարկում Արևմտյան Հայաստանը։ Դա կարելի է բացատրել մի շարք պատճառներով։ Ամենագլխավորը Ժամանակավոր կառավարության կովկասյան մարմին Օզակոմի (Անդրկովկասյան Հատուկ կոմիտե—Վ. Մ.) բացահայտ անկարողությունն էր, որի գործունեությունը, ամբողջովին վերցրած, որակվեց հետագայում որպես «անիշխանություն»։ Ճիշտ է, ապրիլ-մայիս ամիսներին Թիֆլիսում կայացան Թուրքիայից գրավված վայրերի պատգամավորների խորհրդակցություններ, անգամ համագումարներ, որոնք, սակայն, անկարող գտնվեցին ինքնուրույն լուծել Արևմտյան Հայաստանի կառավարման բարդ հարցերը[16] և դիմեցին կենտրոնի օգնությանը։ Ավելին, Կովկասի ազգային ուժերը, մասնավորապես վրացական մենշևիզմը, խիստ հետադիմական, բացահայտ հակահայկական դիրք գրավեց։ Ն. Ժորդանիան, օրինակ, գտնում էր, որ «գրավված վայրերը, միևնույն է, կանցնեն Թուրքիային, ուստի հարկ չկա այդ մարզերի կառավարումը կազմակերպելու նպատակով հսկայական միջոցներ ծախսել»[17]։ Ստորև, կովկասյան ազգային հարցի հետ կապված, մենք ավելի հանգամանորեն կանդրադառնանք այս վարքագծին, որը դեռևս ապրելով ձևավորման սաղմնային վիճակ, 1917 թ. աշնանը և հատկապես 1918 թ. դարձավ քաղաքականություն՝ ունենալով բացահայտ թուրքամետ ուղղվածություն։ Ահա ուրեմն, տեղյակ լինելով կովկասյան ավանդական դարձած հակասություններին ևս, Ժամանակավոր կառավարությունը իրեն ենթարկեց Արևմտյան Հայաստանը, մանավանդ որ այն Ռուսաստանն էր նվաճել։ Եվ վերջապես, դա թելադրվում էր կովկասյան բանակում հակապատերազմական, հեղափոխական շարժումների ուժեղացմամբ, Արևմտյան ռազմաճակատում Ռուսաստանի ձախողմամբ՝ ինչը մեծագույն տագնապ էր առաջացնում կառավարական շրջաններում։ Այլապես ինչով բացատրել ապրիլ-մայիս ամիսներին Ժամանակավոր կառավարության կողմից հայկական ազգային զորամասեր ստեղծելու մտահոգությունը, ազգային ուժեր, որոնք այս պատերազմում մեկ անգամ ևս պետք է պաշտպաներին ճակատը թուրքական ներխուժումից ու նաև բոլշևիզմից։

1917 թ. հուլիսին հաստատվեց Ռուսաստանի պետական սահմանը Արևմտյան Հայաստանում, որը կոչվեց բանակի և մարզերի միջև եղած սահման։ Սահմանագիծն անցնում էր Սյուրմենե, Բայբուրդ, Դերջան, Մամախաթուն, Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի, Սարամ քաղաքներով[18]։

«Հորիզոնի» տվյալներով միայն Էրզրումի շրջանում հայերի թիվը կազմում էր 140 000, նվաճված տարածքներում ընդհանուր առմամբ՝ մոտ 367 000[19]։ Սեպտեմբերի 9-ին, Ավերյանովի հրամանով Թուրքահայաստանի

16 Տե՛ս Кавказское слово, Тифлис, 21 мая, 1917.
17 ЦГИА ГР, ф. 1839, оп. 2, д. 1, л. I.
18 Տե՛ս ЦГВИА РФ, ф. 2100, оп. I, д. 675, л. 45.
19 Տե՛ս «Հորիզոն», 2 հունվարի, 1918։

մարզերից ձևավորվում էր երեք շրջան. 1. Էրզրումի, 2. Խնուսի, 3. Վանի[20]։ Օգոստոսի 6-ին ժամանակավոր կառավարությունը հիմնում է Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարի քաղաքացիական մասի տեղակալի պաշտոն, որը ստանձնում է Հ. Զավրիյանը[21]։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում ստեղծվեց քաղաքացիական իշխանություն, ամեն ինչ արվում էր տեղերում կայուն վարչակարգ ստեղծելու ուղղությամբ, կազմակերպվում էին գաղթականության ընդունման, պարենավորման, միլիցիայի ջոկատների ստեղծման խնդիրները և այլն։

Միաժամանակ, հետևելով 1917 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների հրամանների բովանդակությանը, հանգում ենք այն եզրակացությանը, որ չնայած առաջադիմական նպատակներին ու ցանկությանը, այնուամենայնիվ, լինովնիկների նշանակումների ու վտարումների, զեղծարարության հարյուրավոր փաստերը վկայում են «գործի նկատմամբ նրանց (ռուս պաշտոնյաների—Վ. Մ.) սպաշնորհության և անտարբերության մասին»[22]։ Նման երևույթը բացատրվում է նրանով, որ ռուսական միապետական, հատկապես բարձր զինվորականության շրջանակներում, հեղափոխության ողջ ընթացքում չէր մարում ցարիզմին վերադառնալու գաղափարը։ Այս ամենին ավելանում էին գրավված վայրերում զինվորական կոմիտեների և տեղական կառավարման մարմինների ու պաշտոնյաների միջև ծագող հակասությունները, հիմնականում՝ զինվորական կոմիտեների կողմից կոմիսարության գործերին միջամտելը։ Չնայած օգոստոսի 31-ին ժամանակավոր կառավարությունը օրենք հրապարակեց մարզային ու քաղաքային միլիցիա ստեղծելու մասին և շեշտեց կովկասյան բանակի թիկունքը ամրապնդելու համար կիսառազմականացված միլիցիայի անհրաժեշտությունը, սակայն բազմաթիվ փաստերը վկայում են այդ գործում ևս անհետևողականության մասին[23]։ Էրզրումից Ավերյանովին հեռագրում էին, որ «միլիցիան քայքայված է, քաղաքում չկա քաղաքացիական իշխանություն»[24]։

1917 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Արևմտյան Հայաստանից ստացվող լուրերը լուրջ մտահոգություն էին պատճառում։

«Վան-Տոսպը», օրինակ, գրում էր. «Երեք ամսից ի վեր Հայաստանի վարչությունը մնում է իր հին վիճակում, եղած փոփոխությունները կրում են լոկ պատահական և մասնակի բնույթ։ Պեշկովյան (Պեշկով՝ գրավված մարզերի առաջին գեներալ-նահանգապետը—Վ. Մ.) պոլոժենիեն, որ հորինված էր իրենց ապագա իդեալներից հայերին վերջնականապես պոկելու նպատակով, մինչև այժմ մնում է ուժի մեջ»[25]։ Խնուսի օկրուգի կոմիսար Նիկոնենկոն սեպտեմբերին Ավերյանովին տեղեկացնում էր, որ կորպուսի զբաղեցրած հսկայական տարածքում չկա ոչ մի վարչական օրգան, որ վարի այդ գործերը[26]։

Անդրկովկասում ստեղծված անիշխանության կողքին ու նրան համաքայլ, նույնատիպ իրավիճակ էր ստեղծված և Արևմտյան Հայաստանում, որը ծանրանում էր նաև պատերազմական դրության առանձնահատկություններով։ Այս երկրամասում ևս խորացող սովը, աղքատությունը, ավազակությունները, ընդլայնվող անարխիան, հիմք են տալիս եզրակացնելու, որ Արևմտյան Հայաստանը ժամանակավոր կառավարությանը հետաքրքրում էր ռազմական նկատառումներով և որ բնակչության ճակատագիրը մատնված

---

20 Տե՛ս ЦГВИА РФ, ф. 13249, оп. I, д. 25, л. 114.

21 Տե՛ս նույն տեղում, գ. 177, թ. 3։

22 Տե՛ս նույն տեղում, գ. 179, թ. 102։

23 Տե՛ս նույն տեղում, ֆ. 7366. ց. 1, գ. 53, թ. 155։

24 Տե՛ս նույն տեղում, ֆ. 12225, ց. 1, գ. 12, թ. 1։

25 Տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 11 հունիսի 1917։

26 Տե՛ս ЦГВИА РФ, ф. 13247, оп. I, д. I, л. 6.

էր անուշադրության։ Գործում էին նաև օբյեկտիվ պատճառներ, որոնցից առաջնայինը հենց իր՝ ժամանակավոր կառավարության, որպես նոր դեմոկրատական վարչակարգի, ներքին բարդ իրավիճակն էր։ Ցմոռանանք, որ հուլիսյան դեպքերից հետո երկրում, մասնավորապես ռազմաճակատներում, խորանում էր հակապատերազմական շարժումը, արմատավորվում էր բոլշևիզմը։ Այս կապակցությամբ բարձրանում էր ազգային զորամասերի ստեղծման հարցը։

1917 թ. ընթացքում հեղափոխության զարգացումը, համառուսական զինվորական զորամասերի մոտ իշխանության աստիճանական հեղինակազրկումը հարկադրում էին ժամանակավոր կառավարությանը և ռուսական բանակի գերագույն հրամանատարությանը փոխել ազգային զորամիավորումների նկատմամբ իրենց վերաբերմունքը։ Ազգային զորամասերը արգելելուց իշխանությունները աստիճանաբար անցնում էին դրանց հովանավորությանը, ձգտելով հանձին այդ զորամիավորումների ձեռք բերել առավել կարգապահ, մարտունակ և հուսալի ջոկատներ։ 1917 թ. գարնանը Դենիկինը խոստովանում էր, որ «հարձակման գաղափարը այնքան էլ պոպուլյար չէր ռուսական բանակում», իսկ ինչ վերաբերում էր Կովկասյան ռազմաճակատին, ապա այն ռուսական հրամանատարության, մասնավորապես գեներալներ Դենիկինի և Ալեքսեևի կարծիքով զբաղեցնում էր ուրույն, կիսաանկախ վիճակ։ «Կովկասն ապրում է իր կյանքով,— գրում էր Ալեքսեևը,—կենտրոնին տեղյակ պահելով այն չափով, ինչ չափով անհրաժեշտ էր գտնում և լուսաբանում տեղական շահերի պրիզմայով»[27]։ Սրան ավելանում էր նաև Կովկասյան ճակատի մյուս էական առանձնահատկությունը՝ այն, որ ռազմաճակատ կոչեցյալը պատմական Հայաստանն էր, որի համար էլ կռվում էին հայ զինվորները։

Ցնայած երկու ռազմաճակատներում էլ 1917 թ. գարնանից խորանում էր դասալքությունը, հայկական ուժերը առայժմ չէին լքում իրենց դիրքերը։ Հունիսին, Օզակոմի նախագահ Խաղալամովը, այցելելով Թուրքահայաստան հայտնում էր. «Այդ ճակատում միայն մի հայկական վաշտ կա՝ առաջինը։ Ես գտա այն հիանալի դրության մեջ։ Վերին աստիճանի կարգապահություն, հիանալի ռազմական ոգի, ոչ մի լքում, ոչ մի հուսահատություն»[28]։

Հայկական ազգային զորամասերի ձևավորումը սկսվում է 1917 թ. ապրիլից, ժամանակավոր կառավարության «Բանակի ազգայնացման հիմնական դրույթները» օրենքի հրապարակումից հետո, որտեղ շեշտվում էր, որ «ազգայնացված բանակը ուղղվում է արտաքին թշնամուց հայրենիքի պաշտպանության և պետության ներքին կյանքում կարգուկանոնի հաստատման գործին և առաջին հերթին պետք է հանդիսանա ազգային կորպուսների աղբյուր»[29]։ Այդ նպատակով, 1917 թ. ապրիլի 19-ին Կովկասյան ռազմաճակատի հրամանի հիման վրա, Թ. Նազարբեկյանը ուղարկվում է ռազմաճակատի շտաբ՝ բանակի զորամասերը ազգայնացնելու նպատակով[30]։ Այս գործնական քայլերին զուգահեռ, մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, ժամանակավոր կառավարության զինվորական և քաղաքական ղեկավար շրջաններում չէր խրախուսվում մեծաթիվ հայկական ջոկատների ստեղծումը։ Նրանք ելնում էին Անդրկովկասի անջատողական, անկախական տրամադրություններից։

Ժամանակավոր կառավարությունը կանգնում էր հակասության առջև՝ մի կողմից ջերմորեն աջակցում էր ազգային հայկական զորամասերի ըս-

---

27 А. И. Деникин. Очерки русской смуты, крушение власти и армии. Февраль-октябрь 1917 г.—Вопросы истории, 1990, № 6, с. 105.

28 «Մշակ», Թիֆլիս, 27 հունիսի 1917։

29 ЦГВИА РФ, ф 2015, оп. I, д. 3, л. 197.

30 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 127, թ. 2—5։

տեղծմանը, մյուս կողմից անհանգստանում էր, որ դրանք կդառնան Ռուսաստանից անկախ, ապագա ազգային պետությունների հիմքը։ Այս ամենը, իհարկե, չպետք է նույնացնել 1917 թ. ընթացքում, հատկապես աշնանը, հայկական ազգային շրջաններում ձևավորվող միջոցառումների հետ, որոնց նպատակը թուրքական հարձակմանը դիմագրավելն էր։ Այս նպատակով սեպտեմբերին Թիֆլիսում հիմնվում է Ապահովության խորհուրդ՝ իրեն կից երկրապահ զինվորական խորհրդով։ Ուշագրավ է, որ Ապահովության խորհրդի մեջ մտնում էին բազմաթիվ գործիչներ՝ հնչակյան, ռամկավար, ՀՀԴ, ս.-դ. բոլշևիկյան կուսակցություններից[31]։ Հայտնի է, որ ազգային զորամասերի ստեղծմանը դեմ էին սոցիալ-դեմոկրատական բնույթի (տվյալ դեպքում հայկական) կուսակցություններն ու կազմակերպությունները, որոնք դրանց մեջ տեսնում էին ազգային առանձնացման, ազգամիջյան թշնամանքի դրսևորումներ։ Այս հարցում տարանջատվածություն կար սպեցիֆիկների գաղափարախոսների մոտ։ Եթե օրինակ, Ա. Ջիլինգարյանը «կուռ ազգային, կանոնավոր բանակի»[32] կողմնակից էր, ապա Դ. Անանունը այլ կարծիք ուներ. «Ազգային զորքը չէ, որ անվտանգ պիտի պահի Կովկասը,— գրում էր նա,— այդ պաշտոնը վերապահված է ուժեղ Ռուսաստանին։ Ամեն մի հայ պետք է իմաստունություն ունենա դատելու, որ նրա անվտանգ գոյությունը պայմանավորված է **Ռուսաստանի ամբողջական անվտանգ գոյությամբ** (ընդգծումը մերն է—Վ. Մ.)[33]։ Անվանի հայ մտավորականի 1917 թ. արտահայտած միտքը այսօր էլ լուրջ մտահոգություններ տեղիք է տալիս, մղում է սթափ և հեռատես քաղաքականության։

Ինչ վերաբերում է հայ հեղափոխական դաշնակցությանը, որպես առաջատար ազգային-դեմոկրատական ուժի, ապա նրա ծրագրերում տատանումներ չեն եղել այս հարցում։ Դաշնակցությունը սկզբից ևեթ պաշտպանել է ազգային զորամասերի ստեղծման անհրաժեշտությունը, նախ՝ Կովկասյան ճակատը թուրքական ներխուժումից, քրդական հարձակումներից պաշտպանելու և ապա նաև բոլշևիզմի դեմ։ Նրանք համոզված էին, որ ռուսական հեղափոխության ապրիլի 9-ի առաջադրած ազգերի ինքնորոշման գաղափարը սերտորեն կապվում էր բանակի ազգայնացման հետ։ 1917 թ. ամռանը Թիֆլիսում նրանք հիմնեցին «Հայ զինվորական միությունը»[34]։

Անկախ հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերից, որոշակի շահերից, 1917 թ. հետփետրվարյան պատմական օբյեկտիվ իրավիճակը բխում էր այն հետևությունը, որ բոլշևիկացող Ռուսաստանից Անդրկովկասի անջատման ճանապարհին Հայաստանը անխուսափելիորեն կանգնելու էր թուրքական հարձակման փաստի առջև և ազգային զորամասերի, հետագայում նաև Հայոց ազգային կորպուսի ստեղծումը կենսական անհրաժեշտություն էր դառնում։

Ապագա հայկական պետության ձևավորման ճանապարհին, ինչը համենայն դեպս խոստացել էր դեմոկրատական Ռուսաստանը, մեզ համար կարևորվում էր նաև ազգային պետական մարմնի ստեղծման խնդիրը։ 1912 թ. այդ իրավասությունը իրականացնում էր Հայոց ազգային բյուրոն, որպես հայ իրականության շահերն արտահայտող և Հայկական հարցը բարձրացնող գերագույն մարմին։

Համաշխարհային պատերազմը և հայոց հիմնահարցերի նկատմամբ հայ քաղաքական ուժերի տարակարծիքությունը, առավել հաճախ անզիջում պայքարը ի վերջո թուլացրին համազգային մարմնի դերն ու նշանակությունը, ՀՀԴ մեծամասնությունը Բյուրոն վերածեց կուսակցական մարմնի։ 1916 թ.

---

31 Տե՛ս «Ապառաժ», Շուշի, 17 սեպտեմբերի 1917։

32 Տե՛ս «Գործ», Բաքու, 1917, № 9—10, էջ 134—169։

33 «Բանվոր», Թիֆլիս, 18 հունիսի 1917։

34 Տե՛ս «Հորիզոն», 3 հունվարի 1918։

վերջերից Հայոց ազգային բյուրոյում արևելահայ հասարակական-քաղաքական գործիչների մեջ ձևավորվում, իսկ Փետրվարյան հեղափոխությամբ համարձակորեն բարձրացվում է և համար առաջին խնդիր է դառնում համազգային կենտրոնական մարմնի՝ Ազգային համագումարի հրավիրման և խորհրդի ստեղծման հարցը[35]։

Այստեղ ևս Հայաստանը առանձնանում է։ 1917 թ. Ազգային համագումարի հրավիրումը և համազգային մարմնի ստեղծումը նշանակում էր նախ և առաջ հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների միավորում։ Բայց իրականությունը այն էր, որ մայիսին Երևանում կայացած Արևմտահայ առաջին համագումարում ստեղծվել էր Արևմտահայ ազգային խորհուրդը, հրատարակվում էր արևմտահայերի «Հայաստան» թերթը՝ երկուսն էլ Անդրանիկի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ։ Դա վերապրել միայն Անդրանիկ—դաշնակցություն պայքարին կամ էլ անձնական գործոնին, մեր կարծիքով հիմնավոր չէ։ Նրա հետփետրվարյան ծրագրերն ու գործելակերպը մենք կլուսաբանենք ստորև, իսկ այստեղ նշենք միայն, որ Անդրանիկին մտահոգում էր ապագա համազգային մարմինը այս անգամ ևս դաշնակցության կողմից ղեկավարելու սպասվող միտումը։ ՀՀԴ-ը, իրեն իրավամբ համարելով ազգային ամենազորեղ ուժը, չէր թաքցնում, որ ձգտում է ղեկավարել Ազգային խորհուրդը։ Ավելացնենք նաև, որ 1917 թ. մարտյան միջկուսակցական խորհրդակցությունը, Ազգային բյուրոն, բարձրացնում էին «ազգային համագումար հրավիրելու վաղաժամ լինելու և վտանգավորության»[36] հարցը, ինչը բացատրվում էր հեղափոխության անկայուն ընթացքով, Հայաստանի մեկուսացմամբ և թուրքական վտանգով։ Դրան ավելանում էր այն հանգամանքը, որ ժամանակավոր կառավարության, Կովկասում Օզակոմի քաղաքականության պատճառով աստիճանաբար վարկաբեկվում էր կենտրոնական իշխանության գաղափարը, Ռուսաստանի գրեթե բոլոր ազգային շրջանները ձգտում էին պոկվել թույլ օրգանիզմից։

Ի վերջո, Հայոց ազգային համագումարը (նաև՝ Հայոց ազգային համախորհրդակցություն, Արևելահայոց համագումար—Վ. Մ.) հրավիրվեց 1917 թ. սեպտեմբերի 27-ին և իր ներկայացուցչական կազմով լիովին համապատասխանում էր դեմոկրատական հեղափոխության ոգուն։ Բավական է ասել, որ համագումարի պատգամավորները ներկայացնում էին հայկական ամենատարբեր հոսանքների, քաղաքական կուսակցությունների, հասարակական, ազգային-մշակութային, դպրոցական դեմոկրատական կազմակերպությունների շուրջ 210 պատգամավորներ (99-ը ՀՀԴ-ից), որոնք քննարկելու էին հեղափոխությամբ ծնված համազգային խնդիրները, տալու էին անցած բուռն ժամանակահատվածի քաղաքական գնահատականը, պարզելու էին Հայկական հարցի լուծման ուղիները[37]։ Համագումարում չստեղծվեց հայ քաղաքական ուժերի միասնությունը, թեև ստեղծվեց բազմակուսակցական Ազգային խորհուրդը, որի շուրջն էլ 1918 թ. ձևավորվեց հայոց խորհրդարանը։ Այն 1917 թ. նման ունեցավ դաշնակցական մեծամասնություն։

Փետրվարյան հեղափոխությունը ամենայն սրությամբ Կովկասում բարձրացրեց նաև ազգային հարցը։ Ընդհանրացնող հայացք գցելով 1917 թ. մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածին, մենք կտեսնենք, որ հայ քաղաքական կյանքը բնորոշվում է երկու արմատական, իրար լրացնող հիմնահարցերով՝ Հայկական հարց և ազգային հարց։ Ռուսական հեղափոխության տված հնարավորությունները հայ ազգային-դեմոկրատական ուժերը անմի-

---

35 Ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Փետրվարյան հեղափոխությունը և հայկական ազգային խորհրդների ստեղծումը (1916—1917 թթ. հոկտեմբեր).—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 6։

36 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 96։

37 Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, 1901—1918, Վենետիկ, 1926։

չապես ծառայեցրին այս երկու խնդիրների բարձրացմանն ու լուծմանը։ Ռուսական պետության մյուս ազգային շրջաններից Հայաստանն այստեղ ևս առանձնանում էր։ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը այդ ժողովրդին բաժանել էր երկու հատվածների՝ արևմտահայ և արևելահայ։ Պատմաաշխարհագրական տարանջատվածությունը բաժանել էր և նրանց քաղաքական, տնտեսական շահերը, մշակույթը։ Նման կացությունը, որը տասնամյակներ շարունակ լուռ զարգացում էր ապրում ու խորանում, պայթեց դարձյալ Փետրվարյան հեղափոխությամբ։ Այս անգամ «թրքահայ» և «ռուսահայ» հասկացությունները դարձան քաղաքական հոսանքների ու կուսակցությունների շահարկման առարկա՝ տվյալ հատվածի մոտ քաղաքական մենաշնորհ՝ ձեռք բերելու առումով։ Դրությունը շիկանում էր նաև օբյեկտիվ մի շարք պատճառներից։ Դրանց մեջ առաջնային է արևմտահայ գաղթականության ներհոսքը Անդրկովկաս, Երևանի նահանգ, որը իր հետ բերեց և արևմտահայության իղձերն ու քաղաքական վարքագիծը՝ համեմատաբար ապահով Ռուսահայաստանում դրանք իրականացնելու ցանկությամբ։ Այս առումով Արևմտահայ կամ Հայոց հարցը առաջին անգամ ընդհուպ մոտեցավ, բախվեց և անգամ ինչ-որ չափով դրսևորեց Կովկասահայ ազգային հարցին առնչվելու ձգտում։

Կովկասում ապաստանած շուրջ 300 000 հայ գաղթականների ճակատագրով էր զբաղվելու Արևմտահայերի առաջին կամ Փախստականական համագումարը, որի ոգեշնչողը Անդրանիկն էր։ Նա ապրիլին Թիֆլիսում հիմնեց մի ընկերություն, որը պետք է զբաղվեր արևմտահայությանը հուզող հարցերով և այդ նպատակով ստեղծվեց «Հայաստան» թերթը։ Անդրանիկի և Վ. Թոթովենցի շուրջն էլ ձևավորվեց նոր քաղաքական հոսանքը, որը անկուսակցական էր[38]։ Մայիսի 2-ին բացվեց Արևմտահայ համագումարը[39], որի ընթացքում իշխեց փոխըմբռնման բացակայության կանխազգացումը։ Պատահական չէր Անդրանիկի խոսքը համագումարի բացման ելույթում. «Մենք պիտի կրնանք մեր ցեղին բեկորները պահել ու պաշտպանել, մեր օջախները վերականգնել և մեր ապագայի վրա հույս դնել այն ատեն, երբ զիրար հասկնանք ու համերաշխինք»[40]։ Հակասությունները ծագեցին արևելահայ բարեգործական ընկերությունների հսկայական աշխատանքը դաշնակցականների կողմից անտեսելու, ինչպես և, «ռուսահայ» և «թրքահայ» հասկացությունները սահմանազատելու հողի վրա։ Այս օրերին Անդրանիկը երկրորդ անգամ (առաջինը 1907 թ. էր—Վ. Մ.) հրաժարվեց դաշնակցությունից, մեկնեց Էջմիածին կաթողիկոսին խնդրելու, որպեսզի թույլ չտրվի համագումարի կողմից ստեղծվող Արևմտահայ ազգային խորհրդում դաշնակցությունը մեծամասնություն կազմի։ Նա անիմաստ էր համարում Արևմտահայ խորհուրդ անվանել մի մարմին, որ հրահանգներ էր ստանալու դաշնակցության բյուրոյի կողմից[41]։

Ցավալի է, որ համագումարի «կարևոր արդյունքն» էր համարվում «մեծ պառակտումը», որը բաժանեց հայ հասարակական-քաղաքական կյանքը երկու հոսանքների՝ այսպես կոչված «ազգայինի» և «ապազգայինի»։ Նշվեց, որ ազգային հոսանքի կողմնակիցները թուրքահայերն են, իսկ ապազգային տիտղոսը կրողները՝ ռուսահայերը։ Հասկանալի է, որ ազգայինը գլխավորում էր ՀՀԴ։ Դաշնակցության մենիշխանության խնդրում երկերեսա-

---

38 Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Զոպանյանի ֆոնդ, թղթ. 2411, թ. 1։

39 Տե՛ս «Հայաստան», Թիֆլիս, 7 մայիսի 1917։

40 Նույն տեղում։

41 Տե՛ս Մ. Ավետյան. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870—1920) Հուշամատյան Զոր. Անդրանիկի վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով. Փարիզ, 1954, էջ 176։

նի դիրք էր բռնել հայ լիբերալ-բուրժուազիան, «Մշակի» հայ կադետականությունը, որը այս համագումարում մեկ անգամ ևս դրսևորեց մշակականների և դաշնակցության, իհարկե, ոչ կայուն դաշինքը։ Այդ ժամանակավոր փոխըմբռնումը, յուրօրինակ ընդդիմությունը Անդրանիկի անձի միջոցով ուղղվում էր ռուսական կողմնորոշման դեմ։ Տարօրինակն այն է, որ իրականում դաշնակցության հետփեբրվարյան տակտիկան ձևավորվում էր հենց ռուսական կողմնորոշման շուրջը, չէ որ ամբողջ հույսը կապվում էր ռուսական հաղթական բանակի հետ։ Այստեղ որոշակի դեր էր խաղում նաև արևմտահայ ազգային-ազատագրական շարժման մեջ ղեկավար ուժի ճշգրտման գործոնը։ Արդյունքում ստեղծվեց Արևմտահայ ազգային խորհուրդ, որի 15 անդամներից 8-ը դաշնակցական էին[42]։

Այժմ համառոտակի անդրադառնանք կովկասահայ ազգային հարցին։

Օղակոմի ազգային քաղաքականությունը մի հիմնական գիծ էր պաշտպանում. Կովկասի ներսում, նաև կենտրոնական իշխանության առջև ստեղծել ազգությունների համերաշխության պատրանք, բայց իրականությունն այն էր, որ ավելի սրում ու լարում էր այն։ Մոսկվայի օգոստոսյան պետական խորհրդակցությունում, Օղակոմի անդամ Ջիենկելին գոհունակությամբ նշում էր, որ «մինչև այժմ Անդրկովկասի ազգությունները ոչ մի սեպարատ քայլի չեն դիմել»[43]։ Կովկասում իշխող միտումը Սահմանադիր ժողովին սպասելն էր, այսինքն՝ իշխանության ճշգրտմանն ու կայունացմանը սպասելը։

Ազգային տեսանկյունից Անդրկովկասի վարչական բաժանման հարցը բարձրացվել էր դեռ մինչև հեղափոխությունը՝ 1909 և 1916 թթ. զեմստվային խորհրդակցություններում։ Ժամանակի թելադրմամբ, խորհրդակցությունների հայ ներկայացուցիչները, որոնք բարձրացնում էին սահմանների փոփոխման հարցը, ստիպված իրենց առաջարկը հիմնավորում էին տնտեսական դրդիչներով։ Այս հավաքներում հայերն անփոփոխ կերպով հայտնվում էին փոքրամասնության վիճակում, ընդդեմ վրացական-ադրբեջանական մեծամասնության, որին լիովին բավարարում էր նղած իրավիճակը։

Նույնատիպ էր և ռուսական ցարական բյուրոկրատիայի վարքագիծը։ Անդրկովկասի ոչ միատարր ազգային կառուցվածքը թուլացնում էր ժողովուրդների միասնությունը, անխուսափելի էր դարձնում ազգամիջյան ընդհարումները։ Այսպես, Ղարաբաղի արևելյան գավառները միացվել էին Ելիզավետապոլի նահանգի մահմեդական բնակչություն ունեցող գավառներին, Բորչալուն և Ախալքալաքը մտցվել էին Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ Կարսի ու Կաղզվանի շրջանները անընդմեջ ռուսական իմիգրացիա էր կատարվում։ Այս ամենի հետևանքով Անդրկովկասի 9 նահանգներից Երևանի հայկական նահանգում բնակվում էր Անդրկովկասի հայ ազգաբնակչության միայն մեկ քառորդը։ Եվ քանի որ Անդրկովկասի ազգային-տերիտորիալ վերաբաժանումը հայերի նախաձեռնությունն էր, ուստի այն միշտ հանդիպում էր վրացական-ադրբեջանական համատեղ դիմադրությանը։ Այս առումով միանգամայն անհիմն են Անդրկովկասում հայերի ցրվածությունը շեշտող պատճառաբանությունները։

Հեղափոխությունը հույս արթնացրեց հայ դեմոկրատիայի մեջ, որ կհաղթի արդարությունը։ Եվ իրոք, սկզբում հայերի և վրացիների միջև կար փոխըմբռնում և համաձայնություն, որի հիմքում դրվում էր ազգերի ռեալ տեղաբաշխման սկզբունքը և հանրաքվեն։ 1917 թ. ամռանը Պետրոգրադի խորհրդակցությունում բարձրացվեց երկրամասի վարչական վերաբաժանման հարցը՝ հիմքում դնելով էթնիկական սկզբունքը։ Խորհրդակցությունը դրա-

---

42 Տե՛ս «Վերածնունդ», Կ. Պոլիս, 14 օգոստոսի 1917։

43 Տե՛ս Известия Советов рабочих и солдатских депутатов Тифлиса, 18 августа, 1917.

կան որոշում կայացրեց[44]։ Հայաստանը ներկայացնում էին Ալ. Խատիսյանը և Ավ. Շախաթունյանը, որոնք ապագա Հայաստանը տեսնում էին Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառների միավորման տեսքով։

Հոկտեմբերի 14—15-ը Չխենկելու նախագահությամբ և Ժորգանիայի ու Գեգեչկորու մասնակցությամբ կայացավ Օղակոմի ընդլայնված խորհրդակցություն, որտեղ, հիմք ընդունելով հայերի և ադրբեջանցիների անհանդուրժողականությունը, վրացիներին հաջողվեց մերժել հայկի առաջարկած սահմանային վերափոխումները։ Այստեղ հարկ ենք համարում կանգ առնել նաև պանթուրքիզմի որոշ հարցերին, ինչը առավել հիմնավոր ու ամբողջական է ներկայացնում ասվածը։ Բազմաթիվ նորահայտ արխիվային նյութերը մեզ հնարավորություն են տալիս վստահորեն նշելու, որ փետրվարից հետո Կովկասը դարձել էր համաթուրքական գաղափարախոսության կենտրոն։ Դեմոկրատական հեղափոխության մեջ տեսնելով իրենց ապագան, բազմաթիվ նորաստեղծ մուսուլմանական կոմիտեներն ու կազմակերպությունները, ազգային կուսակցությունները նոր որակի հասցրին թուրանիզմը։ Թուրքական լիբերալ օպոզիցիայի գործիչներից իշխան Սաբահ էդ Դինը մայիսի 15-ին դիմելով ժամանակավոր կառավարության նախագահ իշխան Լվովին խորհուրդ էր տալիս. «Բարձրացրեք Թուրքիան, մոտեցրեք նրան Ձեզ և Ձեր դաշնակիցներին»[45]։ Հմտորեն օգտագործելով ապրիլի 9-ի ազգերի ինքնորոշման վերաբերյալ ռուսական դեմոկրատական կառավարության որոշումը, թուրք քաղաքագետը դնում էր Կոստանդնուպոլսից ռուսների և դաշնակիցների հրաժարման հարցը, Թուրքիայի կործանման մեջ մեղադրում էր Միլյուկովին, հայերի ցեղասպանության ողջ պատասխանատվությունը դնում էր ցարական կառավարության վրա։ Այս ամենը բարձրացող թուրքական ազգայնական շարժման, քեմալականության սաղմերն էին։

Այս առումով ուշագրավ է մեզ համար չեզոք կողմի՝ Կովկասում Ֆրանսիայի ռազմական միսիայի ղեկավար գնդապետ Շարդինյիի զեկուցագիրը՝ ուղղված Ռուսաստանում ֆրանսիական ռազմական միսիայի ղեկավար գեներալ Ժանենին։ Նրան խիստ անհանգստացնում էր մուսուլմանական գնդի վտանգը, հատկապես Կովկասյան ճակատում, որի համար էլ առաջարկում էր իր գործընկերոջը՝ ամեն գնով ընթացք չտալ այդ գնդերի վերաբերյալ մուսուլմանական կոմիտեների խնդրանքներին[46]։ Շարդինյիի զեկուցագիրը լույս է սփռում նաև մեզ հետաքրքրող վրացական-ադրբեջանական ձևավորվող դաշինքի հարցի վրա։ Մենք մասամբ կիսում ենք Շարդինյիի տեսակետը այն մասին, որ մինչև 1917 թ. հուլիսը (նկատի ունի բոլշևիկների ակտիվացումը—Վ. Մ.) համեմատական համաձայնություն էր տիրում կովկասյան ազգային երեք խմբավորումների միջև, այն իմաստով, որ նրանք սպասում էին հեղափոխության նվաճումների իրականացմանը։

Աստիճանաբար, Անդրկովկասի քաղաքական կյանքում մեկուսացնելով հայերին, վրացիները և մուսուլմանները համաձայնության են գալիս, որպեսզի Կովկասում վերցնեն իշխանությունը։ Դա բացահայտորեն դրսևորվեց նաև ամռանը կայացած Անդրկովկասյան գյուղացիական համագումարում, որտեղ տապալվեց դաշնակցության ներկայացրած ագրարային ծրագիրը և այլն։

Ադրբեջանցիները հակվում էին վրացիների կողմը նախ և առաջ այն պարզ պատճառով, որ Օսմանյան Թուրքիայի դեմ միակ հետևողական պայ-

---

44 Տե՛ս Армяно-грузинский вооруженный конфликт. Баку, 1919, с. 6—7.

45 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1276, оп. 14, д. 676, л. 20.

46 Տե՛ս Les grandes puissances, L'Empire Ottoman et les Arméniés. dans les archives Françaises (1914—1918), documents reunis et presentes par Artur Beylerian, Paris, 1983, p. 382 (այսուհետև՝ Ա. Բեյլերյան)։

քար տանողը հայերն էին, և հավատարիմ էին ռուսներին ոչ թե սոսկ համակրանքից ելնելով, այլ շահերից։ Այս դաշինքի մեջ վրացիներն էլ իրենց հերթին հույս ունեին թաթարների միջոցով զսպել հայերին, ապահովել իրենց ապագա ինքնավարությունը, ինչպես նաև այն արտոնյալ պայմանները, որոնք կբարձրանային թուրքերի կողմից Կովկասս ներխուժելու դեպքում։ Դրա լավագույն ապացույցը, մեր կարծիքով, 1918 թ. դեպքերն են։ Կար ևս մեկ ոչ պակաս կարևոր հանգամանք, այն, որ պատերազմի սկզբից Գերմանիայի կողմից հովանավորվող վարձու մուսուլմանական գործակալները լայն պրոպագանդա էին տարել Կովկասում, Պարսկաստանում։

Վերջում ցանկանում ենք ընդհանուր պատկերացում տալ Հայկական հարցում հայ քաղաքական հոսանքների և կուսակցությունների ծրագրերի վերաբերյալ։ «Հայաստանի դրությունը այժմ գրավում է ոչ միայն հայերին,—1917 թ. գրում էր Վ. Տերյանը «Հոգևոր Հայաստան» հոդվածում,— Հայկական հարցը նորից դարձել է վեճերի առարկա, նրանով է տարված այժմ հայ հասարակայնության բոլոր շերտերի ուշադրությունը, այն դարձել է արտասահմանյան և հատկապես ռուսական մամուլի քննարկման օբյեկտ։ Այդ դժբախտ հարցը, որը հայերի համար ընդունել է կենաց ու մահու հարց, իրերի ներկա դրության պայմաններում իր ամբողջ ծանրությամբ դրվել է քննարկման»[47]։

Ինչպես արդեն պարզվեց և՛ 1916 թ. վերջի, և՛ 1917 թ. մարտյան միջկուսակցական խորհրդակցություններում չիրագործվեց հայ քաղաքական կուսակցությունների միավորումը, ինչը ծառայելու էր մեկ նպատակի՝ Հայկական հարցի լուծմանը։ Այժմ, հեղափոխությունից հետո, լիներ դա ավանդական ազգային-դեմոկրատական, թե հեղափոխությամբ ծնունդ առած կուսակցություն և հոսանք, տիրապետող էր դառնում սեփական ազգային ծրագրերով քաղաքական մենաշնորհի ձեռք բերումը։ Ցարիզմի տապալումը հեղափոխության միայն առաջին փուլում համախմբեց հայ քաղաքական ուժերին, որից հետո ծավալվեց կուսակցական անզիջում պայքարը, սերտորեն կապվելով Ռուսաստանի վերելքների ու վայրէջքների հետ։ Այս իմաստով ծրագրային էին Հ. Թումանյանի խոսքերը. «Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին,— գրում է նա,— միայն մի հոգս պիտի ունենա, ամուր բռնի, իր ուժերին ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի»[48]։ Սկզբնական շրջանում հայ հասարակության ձայնը համահնչյուն էր նաև այն հարցում, որ վաղաժամ է ազգային խնդիրներ բարձրացնելը։ Նման զգուշությունը լավագույնս ամփոփված է Դ. Անանունի խոսքերում. «Բռնկվեց ռուսական հեղափոխությունը և հայության երիկամները կծկվեցին երկյուղից։ Այս հեղափոխությունը, ինչպես և 1905 թվականին, նախ և առաջ նրան պատճառում է ինքնապաշտպանության ծանր մտահոգություն»[49]։ Դ. Անանունը նկատի ուներ հայ-թաթարական ջարդերը, նրանում ցարիզմի խաղացած դերը։

Հայ ժողովրդական կուսակցությունը Հայկական հարցը համարելով միջազգային հարց, գտնում էր, որ այն թուրքահայերի ցանկությամբ պետք է լուծում գտնի միջազգային վեհաժողովում։ Ազգային հարցում ՀԺԿ-ը պահանջում էր, որպեսզի Անդրկովկասի հայաբնակ վայրերում հայերը ստանան լայն քաղաքական տերիտորիալ ինքնավարություն, մնալով Ռուսաստանի անբաժան մասը[50]։

---

47 Վ. Տերյան. Հոգևոր Հայաստան, տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ս. Սուքիասյանի ֆոնդ, թղթ. 243, թ. 1։

48 «Հորիզոն», 7 մարտի 1917։

49 Դ. Անանուն. նշվ. աշխ., էջ 599։

50 Տե՛ս ՀՀ ՀՔԿՊԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 11, թ. 1—2։

Հայ սահմանադիր-ռամկավար կուսակցությունը մյուսների նման փառաբանելով Փետրվարյան հեղափոխությունը, առաջարկում էր հարցի սեփական լուծումը. 1. Հայկական հարցը Ռուսական դեմոկրատական պետության մեջ, որտեղ տերիտորիալ ավտոնոմիայի խնդիրը դառնում էր երկրորդական և 2. Հայկական հարցը Ռուսական Ֆեդերատիվ հանրապետության մեջ, որտեղ ավտոնոմիան հրամայական անհրաժեշտություն է։ Ռամկավարները ընտրում են առաջինը»[51]։ Կուսակցության ղեկավարներից Արտակ Դարբինյանի կարծիքը առավել համահնչյուն էր իրականությանը. «Մենք պիտի ուզեինք,— նշում է նա,— որ ցարական իշխանությունը մնար և ռուս բանակի կողմից գրավված Հայաստանի հողերը կցվեին Կովկասյան Հայաստանին՝ Ռուսաստանի տիրապետության տակ։ Այդպես կմտածեր ողջ Թուրքահայությունը, բայց ռուս հեղափոխությունը հայերու համար չէր, որ բռնկած էր»[52]։

Հայ հեղափոխական դաշնակցությունը Արևմտյան Հայաստանի ազատագրմանը զուգահեռ, իր մինիմում ծրագրում պահանջում էր Կովկասում կուլտուր-ազգային ավտոնոմիայի իրագործում՝ էսէռական նահանգային-կանտոնային սկզբունքով, միաժամանակ, ընդգծելով դեմոկրատական Ռուսաստանի կազմում մնալու հանգամանքը[53]։ «Աշխատանք» թերթը սեպտեմբերին գրում էր. «Հայերու համար կա և կմնա հայերու հարցը՝ Թուրքահայաստանի ազատագրումը։ Այդտեղ հայը առանց դասակարգի և եթե կուզեք առանց աշխարհայացքի, իր մասնակցությունը պիտի բերի և պանարմենիզմը պիտի լինի մեր օրերու հավատամքը»[54]։ Հայտնի է, որ ՀՀԴ-ը իրեն հեղափոխական-սոցիալիստական էր կոչում և միևնույն ժամանակ ջերմորեն պաշտպանում էր «պատերազմ մինչև հաղթական ավարտ» կարգախոսը։ Այն կրկին թարմացվեց 1917 թ. հունիսին՝ Ստոկհոլմում հրավիրված Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների վեհաժողովում։

Այստեղ տեղին է հնչում Ստ. Շահումյանի դիտողությունը. «Իհարկե, դաշնակցությունը մեղավոր չէ,— գրում է նա,— որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորույն է, ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել»[55]։

Վերադառնանք Անդրանիկի ղեկավարած հոսանքին։ «Հայաստան» թերթում տպագրված հոդվածում նա առաջարկում էր Հայկական հարցի լուծման երեք տարբերակ. 1. ռուսական կցումը և հովանավորությունը, 2. հայերի կողմից կառավարվող Հայաստանի ինքնավարությունը և 3. դաշնակից պետությունների խորհրդաժողովի կողմից կառավարվող Հայաստանի ինքնավարությունը[56]։

Թուրքական ոչ հեռավոր արհավիրքը Անդրանիկին անվերապահորեն նետում էր «ռուս բարեկամի» գիրկը։ Անդրանիկը Փետրվարյան հեղափոխության օրերին հայտարարեց. «Ողջույն Ռուսաստանի ազատ իրավակարգին։ Թերևս չկա Ռուսաստանի փոքր ազգությունների մեջ ուրիշ որևէ ազգ մը, որ հոգեկան խոր և անխախտ հրճվանքով ողջունե ռուսական ազատագրության շարժումները, որքան հայ ժողովուրդը։ Որովհետև անիկա եղեր է ամենեն ապտակվածը և տուժողը պետական բռնակալ իրավակարգերեն։ Մենք՝ արևմտահայերս առանձին անհուն ուրախությունով կողջունենք Մեծ Ռուսաստանի ազատական հաղթանակը։ Մենք կհավատանք, որ ազատ Ռու-

51 Տե՛ս «Վան-Տոսպ», 23 ապրիլի 1917։

52 Տե՛ս Արտակ Դարբինյան. Հայ ազատագրական շարժման օրերեն. Փարիզ, 1947, էջ 354։

53 Տե՛ս «Հորիզոն», 22 ապրիլի 1917։

54 «Աշխատանք», Երևան, 6 սեպտեմբերի 1917։

55 Ստ. Շահումյան. Նկ. հ. 3, էջ 58։

56 Տե՛ս «Հայաստան», 22 հուլիսի 1917։

սաստան մը պաշտպան պիտի հանդիսանա մեր արյան և անդարմանելի կորուստներու հարկին և հատուցանել պիտի տա մեր դարավոր թշնամին— Օսմանյան պետությանը»[57]։ «Հայաստանին» ևս բնորոշ էր ամբողջ հայ ժողովրդին համակած յուրահատուկ անորոշությունն ու տագնապը, դեպքերի ընթացքին հնաղանդորեն հետևելու իրականությունը։ Անդրանիկի գլխավորած շարժմանը բնորոշ էր հայ ժողովրդի միասնության գաղափարը, որպես արևմտահայության ազատագրության հիմնական գործոն։

Դրեթե նույնն են ո.-դ. հնչակյան կուսակցության, վերակազմյալ հնչակյանների, սպեցիֆիկների դիրքորոշումները։ Հնչակյաններին ևս բնորոշ էր հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունների առջև ծառացած երկընտրանքը՝ մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական հավատամքի ու պատերազմը շարունակելու հարցում։ Այս հանգամանքը դժվարացնում էր կուսակցության գործունեությունը Կովկասում, մանավանդ ՀՀԴ կողքին։

Սպեցիֆիկները Հայկական հարցի ծանրության կենտրոնը տեղափոխում էին Ռուսաստան և նրա լուծումը կապում կայսրության ներքին վերանորոգման հետ։ Դ. Անանունին մտահոգում էր Ռուսաստանի ապագա հասարակական կարգը, նրա բնույթը։ Սպեցիֆիկների կուսակցությունը ազգային դիրքերից գնահատեց շարունակվող պատերազմի խնդիրը, պաշտպանեց Հայաստանի անեքսիան։ Հեղափոխության «ահավոր փորձությունը» նրանք համարում էին ազգային հարցը, որը Սահմանադիր ժողովին թողնելը դիտում էին որպես «դատարկ խոսք»։ Սպեցիֆիկները ջերմորեն պաշտպանում էին կովկասահայության տեղական լայն ինքնավարության և կուլտուր-ազգային ավտոնոմիայի գաղափարը։ Անդրկովկասում նրանք անիրագործելի էին համարում ազգային ինքնորոշման գաղափարը, որպես «մերկ նշանաբան»։ Վերջինս հիմնավորվում էր ազգերի խճճվածությամբ և կուլտուրական տարբեր մակարդակներով[58]։

Ինչ վերաբերում է հայ էսէռականությանը, ը.-դ. մենշևիկյան ու բոլշևիկյան հայկական կազմակերպություններին, ապա նրանք խուսափում էին այդ ցավոտ հարցի բարձրացումից ու քննարկումից՝ սոցիալական ազատագրումը գերադասելով ազգային-ազատագրական պայքարից։

Հայկական հարցի յուրահատուկ բնագավառ պետք է համարել 1917 թ. Եվրոպայի հայկական ազգային պատվիրակության գործունեությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ։ Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում նա ջանում էր եվրոպական պետությունների, մասնավորապես, Ֆրանսիայի աջակցությամբ նախապատրաստել Հայկական հարցի քննարկումը և այն ներկայացնել մոտ ապագայում սպասվող հաշտության վեհաժողովին։ Հեղափոխությունից հետո այս պատվիրակության գործունեությունը իր նախորդ, ինչպես և հաջորդ փուլերից էապես տարբերվում էր։ Առայժմ բացառվում էր Արևմտյան Հայաստանի անկախության պահանջը և որպես Հայկական հարցի լավագույն լուծում էր ընդունվում Հայաստանի բռնակցումը դաշնակիցների կողմից, դարձյալ ռերապատվությունը տալով Ֆրանսիային[59]։ Հակասությունը նրանում է, որ ինչքան էլ Նուբարին դուր չգար Ռուսաստանի իրավակարգը, վարքագիծը, իրողությունը այն էր, որ Արևմտյան Հայաստանը նվաճում էր ոչ թե Ֆրանսիան, այլ Ռուսաստանը և հունալ, թե հաշտության սեղանի շուրջը Հայաստանը դիվանագիտական միջոցներով կանցներ Ֆրանսիային, մեր կարծիքով իրականությունից չէր բխում։

Պ. Նուբարը հատուկ ուշադրություն էր հրավիրում «Միացյալ» բառի իմաստի վրա և այն կիրառում էր միայն Ասիական Թուրքիայի հողերի նկատմամբ։ Դրանով նա բացառում էր Ռուսաստանում և Պարսկաստանում գտնո-

---

57 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 33։

58 Տե՛ս «Գործ», № 5—6, 1917։

59 Տե՛ս Ս. Բեյլերյան. նշվ. աշխ., էջ 343։

վող հայկական հողերի միավորումը։ Ապագա Հայաստանը նա տեսնում էր որպես Բուֆեր Ռուսաստանի, Պարսկաստանի, ապագա Անատոլիայի թուրքական կայսրության (Նուբարը չէր գնում Թուրքիայի մասնատման հարցը—Վ. Մ.) և նոր ինքնավար պետությունների միջև։

1917 թ. հունիսի 12-ին Պ. Նուբարը հանդես եկավ Փարիզի արտաքին գործերի նախարարության դեպարտամենտին ուղղված զեկուցագրով՝ «Հուշաթերթ Հայկական հարցի և Հայաստանի ազատագրման վերաբերյալ» վերնագրով[60]։ Այս փաստաթղթում առաջին անգամ հիշատակված է նաև Հայաստանի հանձնագրի (մանդատ) մասին, որը, ինչպես տեսնում ենք, 1917 թ. մտահղացում է։ Տարբերությունը այն էր, որ մանդատը հանձնվելու էր ոչ թե մեկ կոնկրետ տերության, այլ համաեվրոպական համագործակցությանը[61]։

Որքան էլ տարօրինակ է, բայց 1917 թ. Հայկական հարցով մտահոգված էր անգամ Ճապոնիան, որը, հասկանալի է, հետապնդում էր իր շահերը Առաջավոր Ասիայում։ 1917 թ. մարտի 16-ին Ճապոնական բանակի գեներալ, շտաբի պետ Ուշարան ֆրանսիական զինվորական ներկայացուցչին հայտնում էր թուրքական կայսրության դեմ երեք ճակատով՝ Եգիպտոսից, Միջագետքից, Կովկասից ուղղված հարձակման մասին։ Ֆրանսիական կողմը Հայաստանի վրայով Ճապոնացիների ներխուժումը անիրագործելի էր համարում երկու պատճառով, նախ ռուսական բանակի «զսպված մարտական եռանդի» և ապա նաև Թիֆլիս—Կարս ու Սարիղամիշ—Էրզրում երկաթգծի ծանրաբեռնվածության և միակը լինելու պատճառով[62]։

Մեզ այստեղ հետաքրքրեց Կովկասյան բանակի արդեն իսկ 1917 թ. մարտից սկսված անգործության փաստի հիշատակումը, որի հետ էր կապվում Հայկական հարցի լուծումը իր ամբողջության մեջ։ Հասկանալի է, որ Կովկասյան ճակատը անկախ ռազմաճակատ չէր, տեղական ռազմական գործողությունները սերտորեն առնչվում էին Արևմտյան և Հարավարևմտյան ճակատների հետ։ Բայց ակնհայտ է այն իրողությունը, որ հատկապես 1917 թ. փետրվարից հետո Կովկասյան ճակատը ռուսական հրամանատարության համար ստացավ երկրորդական նշանակություն, փաստորեն աչքաթող արվեց։ Եվ Կովկասյան բանակի «հետհուլիսյան» և, հատկապես, «հետհոկտեմբերյան» քայքայումները մեր կարծիքով պետք է փնտրել 1917 թ. սկզբում և չկապել միայն բոլշևիկյան ագիտացիայի կամ էլ «դավաճան» բանակի հետ։ Այդ ագիտացիան պատերազմին վերջ տալու խոստումներով միայն արագացրեց բանակի լիակատար քայքայումը։ Այլ խոսքով, Ռուսաստանի համար պատերազմը Կովկասյան ճակատում ավարտվել էր և Փետրվարյան հեղափոխությունից հետո, ժամանակավոր կառավարությունը, ինչպես և հետագայում խորհրդային իշխանությունը իր ուժերը համախմբել էր առավել կենսական նշանակություն ունեցող Արևմուտքի վրա՝ փրկելու ռուսական կայսրության հսկայական տարածքները։

Այսպիսին է հիմնականում Հայկական հարցը Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում։ Ինչպիսիք էլ լինեն կարծիքներն ու մտորումները, հեղափոխությունը, բացի իր գլխավոր խնդրից՝ ցարիզմի տապալումից, հնարավորություն տվեց հայ իրականությանը հասնելու երկու իրական նվաճումների։ Դրանք են՝ Հայոց Ազգային խորհրդի և Ազգային կորպուսի ստեղծումը, որոնց շուրջն էլ 1918 թ. ձևավորվեց Հայաստանի Հանրապետությունը։

---

60 Տե՛ս նույն տեղում, էջ 358—361։

61 Տե՛ս նույն տեղում, էջ 361։

62 Տե՛ս նույն տեղում, էջ 366—367։

ВРЕМЕННОЕ ПРАВИТЕЛЬСТВО РОССИИ И АРМЯНСКИЙ ВОПРОС В 1917 ГОДУ

В. Г. МЕЛИКЯН

Резюме

Победа Февральской революции стала переломным этапом в развитии национально-демократического движения в России, в том числе в Армении. В этот период Армянский вопрос получил более отчетливые очертания, включив в себя комплекс проблем. Впервые Армянский вопрос поднимался в условиях демократического государства. В годы войны он стал военным вопросом, даже аннексия Западной Армении Россией имела для армянского народа прогрессивное значение. Временное правительство России впервые создало гражданское управление Западной Армении—генерал-комиссариат, который подчинялся центру, а не кавказским властям. В период Февральской революции Армянский вопрос перешел в сугубо армянскую сферу. Важными проблемами стали: целесообразность активизации Армянского вопроса, выбор между автономией и аннексией, как формой самоопределения, создание гражданских властей в Западной Армении и проблема беженцев, формирование Национального совета и национальных военных частей, борьба за объединение интересов западных и восточных армян и другие. Армянские национально-демократические течения и партии, интеллигенция, в большинстве своем, связывали судьбу Армянского вопроса с Россией.